

ՈՉ ՍՐԲԱԶԱՆ ՊԱԿՏ

Posted on May 26, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Հովասափյան, Բեռլին, Մայիս 2010



Վերջին ժամանակներս նկատում եմք հայ ժողովրդի կյանքում աննախադեպ մի երևույթ, դա Հայաստանի իշխանությունների սերտ համագործակցությունն է հայ առաքելական եկեղեցու հետ: Ինչ խոսք եթե դա կատարվեր այլ պայմաններում, այլ ժամանակներում և չբխեր հայ ժողովրդի ամենաբացասական՝ ծայրահեղ բնավորությունից, ապա այն կլիներ սրբազան պակտ, որը ողջունելի կլիներ:

Սամվել Հովասափյան, Բեռլին, Մայիս 2010



Վերջին ժամանակներս նկատում եմք հայ ժողովրդի կյանքում աննախադեպ մի երևույթ, դա Հայաստանի իշխանությունների սերտ համագործակցությունն է հայ առաքելական եկեղեցու հետ: Ինչ խոսք եթե դա կատարվեր այլ պայմաններում, այլ ժամանակներում և չբխեր հայ ժողովրդի ամենաբացասական՝ ծայրահեղ բնավորությունից, ապա այն կլիներ սրբազան պակտ, որը ողջունելի կլիներ:

Ասել, որ հայ ժողովուրդը ընդունակությունը ունի ծայրահեղ արարքների դիմելու, այն էլ պատմության ամենաաննպաստ ժամանակներում, որը կործանարար է եղել նրա համար, ապա դա հայտնագործությունն չի լինի:

Առաջինը՝ դա քրիստոնեության տարածումն է Հայաստանում: Պատմությունը ինքն է վկայում, որ դա որքա՞ն դաժանությամբ, ինչպիսի՞ ավերածությունների և մարդկային զոհերի գնով է կատարվել: Մի կրոն, որը գալիս էր իր ասելով՝ փրկելու մարդու հոգին, նախ ֆիզիկապես ոչնչացնում է նրան, ավերում նրա մինչ այդ ստեղծածը, պառակտում է ժողովուրդին, ազգը, (այն էլ ժամանակի ամենաճակատագրական պահին) նրան դարձնում է այդ օտար կրոնի գերին, ստրուկը և այդպիսով կրտելով նրան, նրան զրկում է ինքնապաշտպանության բնագից, թող ինձ ներեն հավատացյալները, եթե դա հանցագործությունն չի, հապա ի՞նչ է:

Երկրորդը՝ 1920 -ական թվականների դժվարին, սովի, մահի, հոգևարքի տարիներին նոր իշխանությունների “ամենակարևոր” պարտականությունն էր ամենայն ջանասիրությամբ հալածել հոգևորականներին, ավերել եկեղեցիները և այլն:

Որքա՞ն անհամբեր է հայ ժողովուրդը, նախ մերժել հինը, քանդել եղածը, թե, հետո ինչ կլինի, դա դերակատարների հոգը չէ: Այդպես կատարվեց նաև քսան տարի առաջ, դրան արդեն բոլորը վկա են, պատմությունն չէ, որ արժե հիշել:

Բայց մեր օրերի իրադարձությունները: Ինչո՞ւ ոչ սրբազան պակտ իշխանությունների և եկեղեցու միջև:

Ներկայիս Հայաստանի տնտեսական, սոցիալական և լինել չլինելու դժվարին պայմաններում ասես իշխանությունները և Էջմիածինը այլ կարևոր անելիք չունեն, քան

ամենուր Հայաստանում, մանավանդ Երևանում կառուցել անճաշակ, անորակ եկեղեցիներ, (օրինակ՝ Գրիգոր լուսավորիչի եկեղեցին, ամենաանճաշակը և անորակը Հայաստանի պատմության մեջ) նույնիսկ չխորշելով ծրագրել քանդել Երևանի համար կարևոր մշակույթի մի շինություն՝ Մոսկվա կինոդահլիճի ամառային շենքը, տեղում եկեղեցի կառուցելու համար: Սրա անունը ի՞նչ դնել, ինչպե՞ս չվրդովվել, նաև որպես սփյուռքահայ:

Էջմիածինը պատճառաբանում է, որ եկեղեցիները կառուցվուն են նվիրատուների ցանկությամբ, բայց միթե՞ կարելի է յուրաքանչյուր նվիրատուի ցանկությամբ աղավաղել Երևանի և այլ շրջանների քաղաքային պատկերը, միթե՞ այդքան եկեղեցիների պահանջ կա, միթե՞ եղած եկեղեցիները կիրակնօրյա պատարագներին այնքան են լցվում, որ քաղցած, հիվանդ, գործազուրկ հավատացյալները դուրսն են մնում:

Մեր նախնիները բազմաթիվ եկեղեցիներ են կառուցել, ո՞ր ժամանակներում են դրանք ամրոց եղել և պաշտպանել երկիրը, ի՞նչ արժեն և այսօր հայ ժողովրդին ի՞նչ բարիքներ են բերում Արևմտյան Հայաստանի հազարավոր եկեղեցիները և ի՞նչ բարիք են տալիս, կամ տալու վերջին տարիների կառուցվածքները բազմաթիվ կարիքավորներին, հիվանդներին: Ավելի լավ չէ՞ր լինի դրանց փոխարեն բուժկենտրոններ ստեղծել և ձրի բուժել այն հարյուրավոր, եթե ոչ հազարավոր կարիքավոր հիվանդներին, ովքեր այլ ելք չեն գտնում, քան լքել հայրենիքը և այլ երկրներում բուժօգնություն մուրալու գնալ:

Դեռ ականջիս է երիկամների հիվանդ՝ հայ երիտասարդի՝ (37 տարեկան) լացը և աղաչանքը գերմանացի բժիշկներից՝ “Փրկեք ինձ, միջոց չունեմ, երիտասարդ եմ, մեղք եմ, կինս, երեխաներս են մեղք”: Եթե շարունակելու լինենք, ապա կարելի է բազմաթիվ նման օրինակներ բերել:

Եզրակացնենք՝ բոլորը տեսնում են այն ահավոր սոցիալական վիճակը, որ այսօր գոյություն ունի Հայաստանում, նաև Էջմիածինն է տեսնում այդ, նայել Վեհափառ Հայրապետը՝ ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդն է տեսնում այդ, բայց լռում է և եկեղեցիներ է կառուցում, երևի նման բազմաթիվ հիվանդների, գործազուրկների, կարիքավորների, հայրենիքից հեռացածների, մարմնավաճառության գնացած երիտասարդ հայ կանանց և մայրերի հոգու փրկության համար: Այո շինարար Վեհափառ Հայրապետը լռում է, եկեղեցիներ է կառուցում ու կառուցում, սա ահավոր է...

Այո, այս խոսուն փաստերն են, որ ամեն մի հայի իրավունք են տալիս իշխանությունների և Էջմիածնի միջև նման համագործակցությունը որպես “ոչ սրբազան պակտ” անվանել:

